

**ՀՈՒՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՍԱԿԱՆ  
ԵՎ ՀԵՏԳԱՍԱԿԱՆ ԳՐԱՐԱՐՈՒՄ**

**Ն. Ա. ՄԿՐՏՁՅԱՆ**

Հայերենը, լինելով հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ճյուղ, պահպանում է հիմնալեզվի կարևոր հատկանիշները: Այդ հատկանիշներից մեկը նրա թեքական-համադրական<sup>1</sup> լեզու լինելն է, որն արտահայտվում է հայերենի հոլովական համակարգում:

Գրաբարը կամ հին գրական հայերենը ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հոլովակազմիչը և հոլովական իմաստները: Այս հոլովներից բացի, նախդիրներով արտահայտվում են մի շարք հոլովական իմաստներ: Օրինակ ի նախդիրով և եզակի թվի տրական և հայցական հոլովներով, իսկ հոգնակի թվում՝ հայցական հոլովով, արտահայտվում է ներգոյական հոլովի իմաստ:

Գրաբարում, ինչպես հայտնի է, հոլովներն ունեն հոլովիչ և հոլովակերտ մասնիկներ: Հոլովիչներով (**ա, ե, ի, ո, ու**) որոշվել է հոլովման տիպը, իսկ հոլովակազմիչներով՝ հոլովը: Ըստ նշված հոլովիչների՝ գրաբարում տարբերում ենք 5 պարզ՝ **ա, ե, ի, ո, ու**, և 2 խառն՝ **ի-ա, ո-ա** հոլովումներ: Պարզ հոլովման դեպքում բառը եզակի և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում ունենում է մեկ հոլովիչ, խառն հոլովման դեպքում՝ երկու հոլովիչ, որոնցից մեկը հանդես է գալիս եզակի թվի սեռական, տրական, բացառական հոլովներում, իսկ մյուսը՝ եզակի թվի գործիական և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում: Գրաբարում անունները հոլովվում են արտաքին կամ ներքին թեքմամբ:

Գրաբարի հոլովական համակարգն իր օրինաչափության մեջ, այնուամենայնիվ, ունի նաև քավականաչափ անմիօրինակություններ: Դա արտահայտվում է այսպես. կանոնավոր հոլովման պատկանող շատ բառեր հոգնակի թվում եզակի թվի հոլովիչի հետ զուգահեռ, գործածում են նաև այլ հոլովման ձևեր (**աստեղց—աստեղաց, դասերց—դասերաց...**), կամ՝ նույն բառը հաճախ կարող է հոլովվել ուրիշ հոլովմամբ (**զանձ, զանձի, զանձու, առաւօտ, առաւօտու, առաւօտի...**):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հին հայերենում կամ գրաբարում կամ շատ բառեր, որոնք, իրենց ավանդական հոլովումն ունենալով հանդերձ, հաճախ այլ հոլովմամբ էլ են հոլովվում, որի հետևանքով միևնույն բառը միևնույն հոլովում ունենում է երկու և ավելի ձևեր: Այսպիսի ձևերը իրար հետ գտնվում են իմաստային կամ ոճական հարաբերության մեջ:

Հր. Աճառյանը, անդրադառնալով հոլովման այս երևույթին, գրում է. «Կարելի էր նարծել, թե հոլովական տարբերությունները արդյունք են բարբառների: Բայց այդ դեպքում միևնույն հեղինակը, միևնույն գրքում, միշտ միևնույն հոլովաձևով պիտի դներ բառերը: Իսկ մենք տեսնում ենք, որ Աստվածաշնչի միևնույն գրքի նույնիսկ միևնույն զրվյալում, միևնույն բառի համար երկու տարբեր հոլովաձևեր կան գործածված, օրինակ, Մատթեոսի գլ. Է. 6 կարդում ենք. «Մի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց...», իսկ գլ. Ը. 30՝ «Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական...»<sup>2</sup>:

«Անցման շրջանը սկսվում է հենց մեսրոպյան շրջանից... Եթե նույնիսկ մեսրոպյան շրջանում խառն հոլովմունք կար, այդ նշանակում է, թե նույն ժամանակում արդեն հոլովներն սկսել են խառնվել: Հետագա դարերում շփոթությունը զարգանալով հասավ խառնակության մեծ աստիճանի»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Բ. Զահուլյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 124:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1957, հ. 3, էջ 504:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 518:

Գ. Զահուկյանը հուլյան կարգում եղած զուգամների առկայությունը բացատրում է ձևակաճ, իմաստային ու պատմական գործունեություն, որոնց փոխազդեցությունը կարող է հանգեցնել միտումների համընկնման (որի դեպքում հեշտամում է հոլովման տիպի ուրուշումը) և չհամընկնելու ու խաչաձևման: Վերջինի դեպքում գործում են խաչաձևման դոմինանտության և խաչաձևման զուգամության օրենքները:

Բավականաչափ մեծ թիվ են կազմում երկու տարբեր հոլովում ունեցող բառերը: Կան նաև երեք և նույնիսկ չորս հոլովում ունեցող բառեր<sup>4</sup>:

Հիմք ընդունելով Հր. Աճառյանի<sup>5</sup> մետաբազան հայերենում եղած խառն հոլովում ունեցող բառերի ցանկը՝ այս շարադրանքում առանձնացրել ենք գրաբարում նույնպես հոլովում ունեցող բառերի հետևյալ խմբերը. ա, ի՝ 39, ո, ի-ա՝ 42, ո, ու՝ 10, ի, ի-ա՝ 87, ի, ու՝ 5, ու, ի-ա՝ 6, ինչպես նաև եզակի և հոգնակի թվերում տարբեր հոլովմամբ հոլովվող 9 ուստ, այլ զուգամություն դրսևորող 7 բառ. երեք զուգամեղ հոլովում ունեցող 12 բառ:

Այս բառախմբերում կան մի շարք զուգամ հոլովում ունեցող բառեր, որոնք սկզբնաղբյուրներում գործածվել են նաև այլ հոլովումներով, որոնց մասին բառարաններում և ուսումնասիրություններում որևէ նշում չկա:

Այս հոլովածում վերոնշյալ հոլովախմբերից ներկայացնում ենք ո և ի, ի և ի-ա, ի և ու, ինչպես նաև եզակի ու հոգնակի թվում տարբեր հոլովմամբ հոլովվող բառերի հոլովախմբերը՝ յուրաքանչյուրից հասանուս քննելով 1-ական բառ:

ա) Ո և Ի: Այս խմբում քննում ենք ըստ Հր. Աճառյանի բառացանկի արտաքին թեքման ո և ի կամ ի և ո պարզ զուգամ հոլովում ունեցող բառերը: Այդ բառերն են՝ աղերս, ամուլ, անդ, անմուռնչ, անութ, առած, արած, բերք, բոլոր, գետեմ, գույծ, գոյն, գորտ, գուր, դարման, դրամ, եղեգ, է, լուսին, ծախ-ք, կուզ, ճիշ, մազ, մաղձ, մառայնուղ, մեղեխ, մեզ, մուք, մոճ, չե, պասիս, վայ, ցուրտ, փոխ, փոս, փոր, փորձ, քաղց, օղ: Այս բառերից ուսումնասիրված աղբյուրներում թեք հոլովումներով չեն գործածվել առած, գետեմ, կուզ բառերը:

Աղերս(ի), անութ(ի), է(ի), ծախ-ք(ի), մեղեխ(ի), ցուրտ(ո), փոխ(ո) բառերը, մեր ուսումնասիրած աղբյուրներում գործածվել են մեկ հոլովմամբ՝ կամ արտաքին ի պարզ, կամ ո պարզ, ուստի զուգամություն չեն դրսևորել:

Դարման (ի-ա), ճիշ (ի-ա), պասիս (ի-ա) բառերը գործածվել են նաև նոր հոլովումներով, որոնց մասին նշում չկա:

Այս խմբի բառերից, իբրև օրինակ, ներկայացնում ենք պասիս բառի համառոտ քննությունը:

Պասիս բառը ըստ ՆԶԲ-ի (հ. 1, էջ 610), պատույ կամ տոճի, ի պատուէ, պատուոց, ԱԲ-ի (էջ 683) հոլովվում է արտաքին թեքման ո կամ ի պարզ հոլովումներով, ըստ Հր. Աճառյանի Արմ-ի (հ. 4, էջ 43) և ԼԲ-ի (հ. 3, էջ 466)՝ արտաքին թեքման ո պարզ հոլովումով, կան նաև ի-ով ձևեր (պատուի, ի պատուէ): Գ. Զահուկյանը նշում է արտաքին թեքման ո և ի պարզ հոլովումները<sup>5</sup>:

Դասական գրաբարում պասիս բառը արտաքին թեքման ո և ի պարզ հոլովումներով գործածվել է Ա-ում, ՓԲՊԷ-ում, ԵՎՎԷՊ-ում, ՄԽԷՊ-ում և ՂՓՊԷ-ում: Պասիս բառը 1 անգամ գործածվել է եզակի թվի գործիական հոլովով ՓԲԷՊ-ում և 1 անգամ հոգնակի բվի գործիական հոլովով ՂՓԷՊ-ում՝ արտաքին թեքման ի-ա խառն հոլովմամբ, որի մասին բառարաններում և ուսումնասիրություններում որևէ նշում չկա:

Փառաւորեաց զնա մեծաւ պատուով (Ա, Եզր. Ը. 4):

Տեարս պատուի արծանի համարեցի (Ա. Տիմո. Զ. 1):

Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատուաւ և ազահութեամբ կարասայ... խաքել զսուրբ եպիսկոպոսն Խաղ (ՓԲԷՊ, էջ 91):

Հետդասական գրաբար մատենագրության ուսումնասիրված սկզբնաղբյուրներում պասիս բառը արտաքին թեքման ո և ի պարզ հոլովումներով գործածվել է ՂՎՊ-ում, ՀՊՊԹ-ում, ԳՆՄՈ-ում, ՄԱՊ-ում, ՄԱՊԷ-ում, ՀԴԷՊ-ում: ՂՎՊ-ում պասիս բառը 4 անգամ գործածվել է նաև արտաքին թեքման ի-ա խառն հոլովումով, որի մասին որևէ նշում չկա:

Կրեն զայն փետուր, մեծաւ պատուով (ՀՊՊԹ, էջ 34):

Զորմէ լսեմ՝ թէ ոչ արծանի խաչի և մահու էր զնա, այլ պատուի և երկրպագութեան (ՄԱՊ, էջ 27):

Եւ մեծամեծ պատուաւ պատուէր զեղբայր իւր (ՂՎՊ, էջ 104):

Ներկայացվում է պասիս բառի հոլովական վիճակագրությունը (տե՛ս աղյուսակ 1):

<sup>4</sup> Գ. Բ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 121:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 320:

բ) Ի և Ի-Ա: Այս խմբում քննում ենք գրաքարում արտաքին թեքման ի պարզ և ի-Ա խառն գուգաձև հոլովում ունեցող բառերը, որոնք, ըստ Հր. Աճառյանի բառացանկի, հոլովվում են արտաքին թեքման ի պարզ կամ ի-ա խառն, կամ ի-ա խառն և ի պարզ հոլովումներով: Այդ բառերն են. աղետ, անիմաստ, անյոյս, անշունչ, ապատած, ապաստան, ստագաստ, արբշիտ, բերդ, բրաբիոն, գառագիղ, գալիթ, գետ, գունդ (կլոր), գունդ (խումբ), գոեհ, դաստակերտ, եկամուտ, զոյգ, ժանտ, իղձ, իջավայր, խիստ, խժքիծ, խոզ, կիրճ, կոնք, հրաշակերտ, մեհեան, Աշուլ, շղթայագործ, շնորհ, սաղմոս, սուտակասպաս, տոհմ:

Այս բառերից ուսումնասիրված աղբյուրներում թեք հոլովածներով չեն գործածվել **արբշիտ, բրաբիոն, իջավայր, խժքիծ** բառերը: Միայն մեկ՝ կամ արտաքին տեքման ի պարզ, կամ՝ ի-ա խառն հոլովումներով գործածվել են **աղետ(ի), անիմաստ(ի), ապատած(ի), գառագիղ(ի), գետ (ի-ա), գոեհ (ի-ա), զոյգ(ի), իղձ(ի), կիրճ(ի), Աշուլ(ի), սուտակասպաս (ի-ա)** բառերը:

**Անշունչ(ո), գունդ(ո), մեհեան(ո)** բառերը գործածվել են նաև նոր հոլովումներով, որոնց մասին որևէ նշում չկա:

**Աղյուսակ 1**

Աղբյուրներ	խառնի (ի)	խառնի	ճառնի (ի)	ճիւղախառնի	վիւղախառնի	տառախառնի	ճուրախառնի
Աստվածաշունչ	1	15			5		
Բուզանդ	2	7			5	1	
Ազաթանգեղոս	1	5			7		
Շղիշե	8	3	1	2			
Մ. Խորենացի	10	2	2		1		
Ղ. Փարպեցի	16	10		3	2		1
Գր. Նարեկացի	3						
Ղևոնդ	2	2			1		4
Հեթում պատմիչ	1	2					
Մխ. Անեցի		2			1		
Մխ. Այրիվանեցի	1	2					
Հովհ. Դրասխանակերտցի	4	14			3		

Այս խմբից, իբրև օրինակ, ներկայացնում ենք **մեհեան** բառի համառոտ քննությունը:

**Մեհեան** բառը ըստ ՆՀԲ-ի (հ. 2, էջ 245), ԱԲ-ի (էջ 554), Հր. Աճառյանի Արմ-ի (հ. 3, էջ 298), ԼԲ-ի (հ. 3, էջ 486), Գ. Զահուկյանի (նշվ. աշխ., էջ 323), հոլովվում է արտաքին թեքման ի պարզ և ի-ա խառն հոլովումներով: ՆՀԲ-ի բառահողովածում բառիս արտաքին թեքման ի-ա խառն հոլովման վերաբերյալ բնագրային վկայություն չկա:

Դասական գրաքար մատենագրության մեր ուսումնասիրած աղբյուրներում **մեհեան** բառը գործածվել է Ա-ում, ԱՊՀ-ում արտաքին թեքման ի պարզ և ի-ա խառն հոլովումներով: Ա-ում գործածվել է 12 անգամ՝ արտաքին թեքման ի պարզ և ի-ա խառն հոլովումներով: ԱՊՀ-ում այս գուգաձև հոլովումներով կա 11 գործածություն: ՓԲՊՀ-ում (2 անգամ) և ՄՆՊՀ (2 անգամ) **մեհեան** բառը հոլովվել է արտաքին թեքման ի պարզ հոլովմամբ:

Բացի վերոնշյալ հոլովումներից Ա-ում 1 անգամ կա այս բառի արտաքին թեքման ո պարզ հոլովմամբ գործածություն, որի մասին որևէ նշում չկա:

Խորհուրդ առեալ... շինել ի պաշտօն **մեհեանից** աշտարակ մի (ԱՊՀ, էջ 293):

Զամենայն քարինս **մեհեանաց** քոց (Եսայ, ԻԷ, 9):

Օտուր գքաղաքօք շինեցին **մեհեանյ** (Ա. ՄԱԿ. Ա, էջ 58):

Հետդասական գրաբար մատենագրության ուսումնասիրված աղբյուրներում **մեհեան** բառի թեք ձևեր կան ԳՆՄՈ-ում, ՄԱՊ-ում: ԳՆՄՈ-ում (1 անգամ) գործածվել է եզակի թվի սեռական, տրական հոլովով, ուստի դժվար է կողմնորոշվել, թե այն որ հոլովմամբ է հոլովվել, իսկ ՄԱՊ-ում (1 անգամ) գործածվել է արտաքին թեքման ի հոլովմամբ:

Երաց գրություն **մեհեհիցն** և խոտորեցաւ ի կոսմոլոթիւն (ՄԱՊ, էջ 28):

գ) **Ի և Ու:** Այս խմբում քննել ենք գրաբարում արտաքին թեքման **ի և ու** պարզ հոլովում ունեցող բառերը, որոնք ըստ Հր. Աճառյանի բառացանկի, հոլովվում են արտաքին թեքման **ի և ու** կամ **ու և ի** պարզ հոլովումներով:

Այդ բառերն են. առաւօտ, գանձ, կահ, կողոպտոտ, վնաս: Այս բառերից թեք հոլովաձևերով չի գործածվել **կողոպտոտ** բառը, իսկ **գանձ** բառը բացի նշված հոլովումներից, հոլովվել է նաև արտաքին թեքման **ո** պարզ և **ի-ա** խառն հոլովումներով, որոնց մասին որևէ նշում չկա:

Այս խմբից, իբրև օրինակ, ներկայացնում ենք **գանձ** բառի համառոտ քննությունը:

**Գանձ** բառը ըստ ՆՀԲ-ի (հ. 1, էջ 523), ԱԲ-ի (էջ 203), Հր. Աճառյանի Արմ-ի (հ. 1, էջ 510) և ԼԲ-ի (հ. 3, էջ 465), հոլովվում է արտաքին թեքման **ու** կամ **ի** պարզ հոլովումներով: Գ. Ջահուկյանը (նշվ. աշխ., էջ 324) այս բառի համար նշում է արտաքին թեքման **ի և ու** պարզ հոլովումները:

Դասական գրաբար մատենագրության ուսումնասիրված աղբյուրներում **գանձ** բառը արտաքին թեքման **ու և ի** պարզ հոլովումներով գործածվել է Ա-ում, ՓԲԴԼ-ում, ՄԽԴԼ-ում, ՂՓԴԼ-ում: ԵկեՆ-ում և ԵՎՎԷԴ-ում բառս գործածվել է միայն արտաքին **թեքման** **ի** պարզ հոլովմամբ, իսկ ԱՊԼ-ում՝ միայն արտաքին թեքման **ու** պարզ հոլովմամբ: **Գանձ** բառը ՓԲԴԼ-ում գործածվել է 2 անգամ արտաքին թեքման **ի-ա** խառն հոլովմամբ, որի մասին բառարաններում և ուսումնասիրություններում որևէ նշում չկա:

**Գանձիք** եղիցի փրկութիւնն մեր (Եսայ. ԼԳ. 8):

Ունէին և գանթի կարասի **գանձուցն** զինու և զարդու (ՓԲԴԼ, էջ 89):

Անչափ լցան **գանձօք** և ստացուածովք (ՓԲԴԼ, էջ 159):

Հետդասական գրաբար մատենագրության մեջ **գանձ** բառը արտաքին թեքման **ու և ի** պարզ հոլովումներով գործածվել է ՂՎՊ-ում, ՀՊԹ-ում, ՀԴՊԼ-ում, իսկ միան արտաքին թեքման **ու** պարզ հոլովումով գործածվել է ԳՆՄՈ-ում և ՄԱՊԼ-ում: ՀԴՊԼ-ում կա արտաքին թեքման **ո** պարզ հոլովմամբ 1 գործածություն, որի մասին որևէ նշում չկա:

Քանզի զմթերս **գանձուցն** բացեալ բաշխեր... (ՂՊԼ, էջ 89):

Իսկ յորս կարէ հասանել ոտն մարդոյ են ճոխք անհամար փարթամութեամբք և **գանձիք** (ՀՊԴԼ, էջ 5):

Դճէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ **գանձոյն** երկնաորի (ՀԴՊԼ, էջ 84):

Ուսումնասիրությունից երևում է, որ **գանձ** բառը դասական գրաբարում հոլովվել է արտաքին թեքման **ու և ի** պարզ հոլովումներով, ինչպես նաև արտաքին թեքման **ի-ա** խառն հոլովմամբ, որի մասին բառարաններում և ուսումնասիրություններում նշում չկա, իսկ հետդասական գրաբարում՝ նաև արտաքին թեքման **ո** պարզ հոլովմամբ, որի մասին նույնպես նշում չկա, և դրսևորել է հոլովական զուգաձևություն:

Ներկայացվում է **գանձ** բառի հոլովական վիճակագրությունը (տե՛ս աղյուսակ 2):

դ) **Եզակի և հոգնակի թվերում տարբեր հոլովմամբ հոլովվող բառեր:** Այդ բառերն են. ժողովուրդ, խոյ, հեր, ծնունդ, ձեռն, ճիրան, ոտն, չափ, քար: Այս բառերից մեր ուսումնասիրած աղբյուրներում թեք հոլովաձևերով չի գործածվել **ճիրան** բառը: **Ժողովուրդ, ձեռն, ոտն** բառերը բացի բառարաններում և ուսումնասիրություններում նշված հոլովումներից, հոլովվել են նաև այլ հոլովումներով, որոնց մասին որևէ նշում չկա: Այսպես. **ժողովուրդ** բառը հոլովվել է նաև արտաքին թեքման **ի** պարզ և **ի-ա** խառն հոլովումներով, **ձեռն**՝ նաև արտաքին թեքման **ո** պարզ հոլովումով, **ոտն** բառը հոլովվել է նաև **ն (ու ներքին)** հոլովումով: Այս բառախմբից համառոտ ներկայացնում ենք **ձեռն** բառի քննությունը:

**Ծնունդ** բառը ըստ ՆՀԲ-ի (ն. 1, էջ 1022), ԱԲ-ի (էջ 410), Գ. Զահուկյանի (նշվ. աշխ., էջ 88, 127) հոլովվում է **եան, ո** հոլովումներով: Հր. Աճառյանը Արմ-ում այդ բառի վերաբերյալ որևէ նշում չունի, իսկ ԼԲ-ում (ն. 3, էջ 465) նշում է **ո, եան** հոլովումները:

Դասական գրաբարում **ծնունդ** բառի թեքված գործածություն կա Ա-ում, ԿՎՄ-ում, ԵԿԵԱ-ում, ԱՊՀ-ում, ՓԲՊՀ-ում, ԵՎՎՀՊ-ում, ՄԽՊՀ-ում, ՂՓՊՀ-ում: Եզակի թվում բառս հոլովվել է **եան** հոլովմամբ, իսկ հոգնակի թվում՝ արտաքին թեքման **ո պարզ**: Այս օրինակաչափությունից կա 1-ական շեղում. Ա-ում հոգնակի թվում հոլովվել է **եան** հոլովմամբ. **ծննդեամբք** և ԱՊՀ-ում եզակի թվում հոլովվել է **ո** հոլովմամբ՝ **ծննդոյ**:

## Աղյուսակ 2

Աղբյուրներ	գանձու	գանձուց	գանձուք	գանձի	գանձի	գանձից	գանձիք	գանձօք	կայրոք
Աստվածաշունչ	8	15		21	2	1	1		
Կորյուն		1							
Եզնիկ				1					
Ագաթանգեղոս	3	1							
Փ. Բուզանդ	1	5		2			5	2	
Եղիշե							2		
Մ. Խորենացի	1	7					6		
Շ. Փարպեցի («Հ. Պ.»)	11			1					
«Թուղթ»	4								
Ղևոնդ		12		1			1		
Հեթում պատմիչ	2	1	1				1		
Գր. Նարեկացի	3	5							
Մխ. Անեցի		1							
Հովհ. Դրասխանակ.		2		1			1		1

Երբ երկիր **ծննդեան** քո (ծնն. ԼԲ. 9): Տեր փառաւորեաց զհայր ի վերայ **ծննդոց** (Աիրաք. Կ. 3): Բազմացուցե զքեզ... **զծննդեամբք** (Բ. Օրենք. ԻԲ. 11): Այնր **ծննդոյ** Հօր... նա միայն գիտե (ԱՊՀ, էջ 195):

Հետդասական գրաբար մատենագրության մեջ **ծնունդ** բառը թեք հոլովաձևերով գործածվել է ՂՎՊ-ում, ՋԻԲ-ում, ՀՊՊԹ-ում, ԳՆՄՈ-ում, ՄԱՊ-ում, ՄԱՊՀ-ում, ՀՂՀՊ-ում: Այստեղ նույնպես այս բառը եզակի թվում հոլովվել է **եան** հոլովմամբ, իսկ հոգնակի թվում՝ **ո** հոլովմամբ: Այս օրինակաչափությունից կա 1-ական շեղում ՋԻԲ-ում, որտեղ **ծընունդ** բառը հոգնակի թվում հոլովվել է **եան** հոլովմամբ (**ծննդեանց**) և ՀՂՀՊ-ում, որտեղ եզակի թվում բառը հոլովվել է **ո** հոլովմամբ (**ի ծննդոյ**):

**Ծնունդ** բառը ՋԻԲ-ում 2 անգամ գործածվել է նաև արտաքին թեքման **ի պարզ** հոլովմամբ, որի մասին որևէ նշում չկա:

Թողին զերկիր **ծննդեան** իրեանց և հատուածեալք անկան ի կողմն արքային բարեպաշտի (ՂՎՊ, էջ 129):

Եւ **ի ծննդոց** սորա սերեալ ազգի Բագրատունեաց (ՀՂՀ, էջ 21):

Մանօթասցին քեզ հարազատութիւն մերոյ ի միոյ միայնոյ **ծննդոյ** զոլ այսչափ նահապետութեանց և ազգաց (ՀՂՀ, էջ 11):

Եւ է կերպարան իսկապէս ի վերայ **ծննդեանց** եւ ելմանց և ստեղծմանց (ՋԻԲ, էջ 86):

Է որ ըստ յերկարման առեալ վասն **ծննդից** անհարիցն բազմութեանց (ՋԻԲ, էջ 95):

**Ծնունդ** բառը դասական և հետդասական գրաբարով հոլովական զուգաձևություն է դրսևորել արտաքին թեքման **ո պարզ** և **եան** հոլովումներով, ինչպես նաև արտաքին թեքման **ի պարզ** հոլովումով, որի մասին որևէ նշում չկա:

Ներկայացվում է **ծնունդ** բառի հոլովական վիճակագրությունը (տե՛ս աղյուսակ 3):

Աղբյուրներ	ճճճճճճ	(ի) ճճճճճճ	ճճճճճճ	ճճճճճճ	ճճճճճճ	ճճճճճճ	(ի) ճճճճճճ	ճճճճճճ	ճճճճճճ	ճճճճճճ
Աստվածաշունչ	20	6			1		10	1		
Կորյուն	1						1			
Եզնիկ	8	1	6				3	1		
Ազաթանգեղոս	10		1			1	6			
Փ. Բուզանդ	4	1	1				1			
Եղիշե	1		1							
Մ. Խորենացի	6	1					11	2		
Ղ. Փարպեցի	4		1				1			
Զենոն	1			1					1	1
Ղևոնդ	8									
Հեթում պատմիչ	7		1							
Գր. Նարեկացի	1		1				5	1		
Մխ. Անեցի	1	1					4			
Մխ. Այրիվանեցի	1						2			
Հովհ. Դրասխանակ.	2					1	7			

Ինչպես տեսնում ենք, հայ քերականագիտության մեջ գրաբարի զուգան հոլովումների քննությունը եղել է քերականների և լեզվաբանների ուշադրության կենտրոնում, այնուհանդերձ, պետք է նշել, որ գրաբարում կան տարբեր զուգան հոլովում ունեցող բառեր, որոնք հոլովվել են նաև այլ հոլովումներով և դուրս են մնացել ուշադրությունից, զետեարար այս թեման սպառված չէ և կարիք ունի ամբողջական և ծավալուն ուսումնասիրության:

ՀԱՄԱՌՈՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա.— «Աստուածաշունչ հին և նոր կտակարանաց, Կոստանդնուպոլիս, 1895 թ.:
- ԱԲ.— «Առձեռն բարարան հայկազնեան լեզուի», Վենետիկ, 1865:
- Ա. ՄԱԿ.— Մակարայեցույ Ա (տե՛ս «Աստուածաշունչ...»):
- ԱՊՀ.— «Ազաթանգեղայ պատմութիւն հայոց», Տփղիս, 1909:
- Արմ.— Հր. Աճառյան, Հայերեն արմատական բարարան, հհ. 1—4, Երևան, 1971—79:
- ԳՆՄՈ.— Գր. Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Պուլճնու Այրես, 1948:
- ԵՆԵԱ.— «Եզնիկայ Կորբացույ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826:
- Եսայ.— Եսայի («Աստուածաշունչ...»):
- ԵՎՎՀՊ.— «Եղիշեի վասն վարդանայ եւ հայոց պատերազմին», Երևան, 1957:
- Զիբ.— «Զենոնի իմաստասիրի Յաղագս բնութեան», Երևան, 1950:
- ԼԲ.— Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957:
- Ծճճ.— Ծնունդը («Աստուածաշունչ...»):
- ԿՎՄ.— Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
- ՀԴՊՀ.— «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912:
- ՀՊՊԹ.— Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:
- ՂՎՊ.— Ղևոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:
- ՂՓՊՀ.— «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1804:
- ՄԱՊ.— «Մխիթարայ Անեցույ Պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1879:
- ՄԱՊՀ.— «Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860:
- ՄԽՀՊ.— «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913:
- ՆՀԲ.— «Նոր բարգիք հայկազան լեզուի», հհ. 1, 2, Վենետիկ, 1836—1837:
- Տիմո.— Թուրք Պողոսի առաքելու առ Տիմոթեոս Առաջնորդ (Աստուածաշունչ...):
- ՓԲՊՀ.— «Փատարի Բուզանդացույ Պատմութիւն հայոց», Ս. Պետերբուրգ, 1883:
- Ռրեճ Բ.— Երկրորդում օրինաց Բ (Աստուածաշունչ...):

Н. А. МКРТЧЯН — Параллельные формы склонений в классическом и пост-классическом граре. — В основу анализа принят словарь, представленный в 3-ем томе «Полной грамматики армянского языка» Г. Ачаряна. Выбранные слова исследуются на основе большого языковедческого и библиографического материала.